ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎՐԱ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Նաիրա Ռաֆիկի Հակոբյան

հոգեբանական գիտությունների թեկնածու
Սոնա Արտակի Մակիչյան

Առաջատար կազմակերպություն՝ Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հունվարի 30-ին, ժամը 14.00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թվականի դեկտեմբերի 25-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար
հոգեբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Կ. Ե.Վարդանյան

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Անձի և հասարակության հոգեկան առողջության, անձի հաջող սոցիալականացման, անվտանգ կենսագործունեության համար 21-րդ դարում առաջ եկան մի շարք վտանգներ, որոնք անմիջականորեն պայմանավորված են կյանքի գրեթե բոլոր ոլորտների ավտոմատացմամբ: Փոխվել են անձի, սոցիալական խմբերի, ողջ հասարակության վրա հոգեբանական, տեղեկատվական ազդեցությունների ձևերն ու մեխանիզմները, մեթոդները, ազդեցության հետևանքները:

Ատենախոսության շրջանակում ուսումնասիրել ենք ուսանող երիտասարդության վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցության մեխանիզմները, ձևերը, ուղղությունները, հետևանքները, կանխարգելման ուղիները: Մեր ատենախոսության թեմայի արդիականությունն անմիջականորեն պայմանավորված է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից պայմաններում ապատեղեկատվության, դրա դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցության կանխարգելման, հիշյալ գործընթացներում ուսանող երիտասարդների տեղեկատվական անվտանգային կարողունակությունների ձևավորման, զարգացման, անձնային որակների, հոգեկան կայունության, ինքնակառավարման, ինքնավստահության, հույզերի կառավարման, իրազեկվածության, մեդիագրագիտության, մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Հոգեբանական գիտության ոլորտում վերոնշյալ հիմնախնդիրների տարաբնույթ կողմերին՝ անձի, հասարակության գիտակցության, դիրքորոշումների, հույզերի վրա ազդեցության մեխանիզմներին, սոցիալական տարբեր կարգավիճակներում, դիրքերում դրանց դրսևորման առանձնահատկություններին, դրանցով պայմանավորված վարքագծի փոփոխություններին անդրադարձել են տարբեր մասնագետներ՝ Է.Արոնսոնը, Ֆ.Զիմբարդոն, Ջ.Թերները, Տ.Ուիլսոնը, Ռ.Էյկերտը, Ռ.Չալդինին, Կ.Շտայները, Պ.Էվանսը, Ս.Աշը, Ս.Մոսկովիչը, Մ.Հյուստոնը, Գ.Գրաչովը, Գ.Անդրեևան, Ե.Դոցենկոն, Ե.Սիդարենկոն, Ս.Ռ.Գևորգյանը, Գ.Սալդատովան, Ի.Յու.Լազարևան, Ե.Պ.Բելինսկայան, Ս.Կարա-Մուրզան, Գ.Պոչեպցովը, Է.Նոյել-Նորմանը, Տ.Ադամյանցը, Ա.Բարանովը, Յու.Ստեպանովը, Պ.Բուրդյեն, Ս.Մ.Վորոբյովը, Ռ.Մ.Յուսուպովը, Ի.Ֆ.Կեֆելին:

Հետազոտության նպատակը ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության մեխանիզմների, դրսևորումների, հետևանքների բացահայտումն ու կանխարգելման ուղիների մշակումն է:

Հետազոտության օբյեկտը՝ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցությունն է:

Հետազոտության առարկան ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության մեխանիզմների, օրինաչափությունների բացահայտումն ու կանխարգելումն է :

Հետազոտության նպատակից և վարկածից բխում են հետևյալ **խնդիրները.**

1. ուսումնասիրել գիտական գրականության մեջ անձի վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ ազդեցության, դրանց կանխարգելման սոցիալ-հոգեբանական մոտեցումները,
2. բացահայտել ապատեղեկատվության հակվածություն ունեցող ուսանողներին,
3. բացահայտել ուսանողների անձնային առանձնահատկությունները,
4. բացահայտել ուսանողների ագրեսիվության տեսակները, մակարդակը տագանապայնությունը, ինքնավերաբերմունքը, համացանցային կախվածությունը,
5. մշակել և իրականացնել «Հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» ինտեգրված համապիտանի թրենինգ-դասընթաց՝ առարկայական նկարագրով և թեմատիկ տրոհմամբ, ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման նպատակով,
6. իրականացնել ռեթեստավորում «Հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» ինտեգրված համապիտանի թրենինգ-դասընթացից հետո:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելումը հնարավոր է, եթե ուսանողը ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության մեխանիզմների, դրսևորումների իմացության և ինքնակառավարման կարողությունների հիման վրա օբյեկտիվ գնահատի իրավիճակը, կանխատեսի հնարավոր բացասական հետևանքները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտական աշխատանքի համար որպես մեթոդաբանական հիմք առանձնացրել ենք Է.Ֆրոմի, Է.Բերնի մոտեցումները, որոնք վերաբերում են սոցիալական հոգեբանությանը, անձի, սոցիալական խմբի հոգեբանական վերլուծությանը, մանիպուլյացիաներին, պահանջմունքներին, մոտիվացիային, անձի ինքնահիրացման վերաբերյալ Ա.Ադլերի հայացքները, Տ.Բրաբազոնի մոտեցումները համացանցում անձի «ես» հիմնադրույթի պահանջմունքների բավարարման վերաբերյալ, Մ.Քաստելսի թվային տեխնոլոգիաների և հասարակության հարաբերությունների մոդելը, Ք.Յանգի՝ համացանցից անձի կախվածության, Ս.Ն.Արֆխանովայի, Ե.Ա.Միխեևի, Տ.Ա.Նեստիկի, Մ.Կ.Ջոնսոնի, Մ.Ի.Դոլգովի՝ ապատեղեկատվության նկատմամբ անձի վերաբերմունքին, հետևանքներին, կանխարգեմանը վերաբերող մոտեցումները, Ռ.Դևիսի

համացանցային կախվածության էթիոլոգիայի մոդելը, Մ.Պ.Մկրտումյանի տեղեկատվական-հոգեբանական անվտանգության հիմնադրույթները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտությունն իրականացնելիս կիրառել ենք հետևյալ գործիքակազմը. 1. տեսական և փորձարարական մեթոդներ՝ հիմնախնդրի վերաբերյալ առկա գրականության, հետազոտությունների համեմատական վերլուծություն, հարցաթերթիկային հարցում մեր կողմից մշակված հարցաթերթով, կոնտենտ անալիզ, թեստ, գիտափորձ, մաթեմատիկական վիճակագրական մեթոդ, 2. մեթոդիկաներ՝ Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան» (16-PF), Ա.Բասսի և Ա.Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան», «Տագնապայնության ինքնագնահատման» Չ.Դ.Սպիլբերգերի և Յու.Լ.Հանինի մեթոդիկան, Վ.Վ.Ստոլինի և Ս.Պ.Պանտիլեևի «Ինքնավերաբերմունքի ուսումնասիրության» մեթոդիկան, Կիմբեռլի-Յանգի «Համացանցից կախվածություն» մեթոդիկան:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Հիմնավորել ենք, որ առկա է ուղիղ համեմատական կապվածություն ուսանողների՝ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածության և անձնային առանձնահատկությունների, իմացական, հուզական ոլորտների, համացանցից կախվածության միջև:
2. Բացահայտվել են ապատեղեկատվության հակված ուսանողների հոգեբանական առանձնահատկությունները, որոնցից են ոչ համարժեք ինքնագնահատականը, ցածր ինքնաարժևորումը, ինքնաընդունումը, ինքնավերահսկումը, դյուրահավատությունը, հուզական անկայունությունը, նյարդայնությունը, իրադրային տագնապայնությունը, խոսքային և անուղղակի ագրեսիան, կասկածամտությունը:
3. Մշակվել և փորձարարությամբ հիմնավորվել է «Հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» բուհական ինտեգրացված թրենինգ-դասընթացի արդյունավետությունը ապատեղեկատվության դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցության կանխարգելման գործում:

Հետազոտության տեսական նշանակությունը: Մեր կողմից իրականացված տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքները կարող են ներառվել սոցիալական հոգեբանության տեսական դրույթներում, լրացնել հիմնախնդրին վերաբերող բովանդակային բազան:

Հետազոտության գործնական նշանակությունը: Մեր հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ձեռքբերված հետազոտական տվյալները և մշակված ինտեգրացված բուհական թրենինգ-դասընթացը կարող են ներդրվել մասնագիտական կրթական ծրագրերում և նպաստել ուսանող երիտասարդների վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցության կանխարգելմանը: Ինչպես

նաև, կարևորում ենք, որ մեր հետազոտությունների արդյունքներն ու դասընթացը որպես մեթոդական նյութ արդյունավետորեն կարող են կիրառվել ուժային պետական կառույցների համապատասխան ստորաբաժանումների, պրակտիկ հոգեբան մասնագետների կողմից:

Հետազոտության փուլերը և փորձաքննությունը: Հետազոտությունն իրականացվել է տրամաբանորեն կապակցված երեք փուլերով.

1.Պրոբլեմային-որոնողական փուլ: Այս փուլի հիմնական նպատակը եղել է հետազոտության նպատակի, խնդիրների ձևակերպումը, հետազոտության մեթոդների ընտրության հիմնավորումը, անձի, խմբի վրա տեղեկատվության ազդեցության սոցիալ-հոգեբանական մոտեցումների ուսումնասիրությունը: Արդյունքը հետազոտության հիմնախնդրի, նրա հիմնական ուղղությունների որոշարկումն էր, հիմնական հասկացությունների համակարգի կառուցումը, վարկածի ձևակերպումը:

2.Համակարգման փուլ: Ուսումնասիրվել, բացահայտվել և վերլուծվել են անձի, խմբի վրա տեղեկատվության, ապատեղեկտվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության ձևերը, միջոցներն ու հոգեբանական մեխանիզմները: Այս փուլում կառուցվել է փորձարարական հետազոտության մեթոդական փաթեթը, մշակվել է ուսանողների վրա տեղեկատվության, ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելմանն ու հոգեբանական պատրաստությանը նպատակաուղղված «Հոգեբանական պատրսատություն և մեդիագրագիտություն» բուհական ինտեգրացված դասընթացի առարկայական նկարագիրը, հավաստող, ստուգողական և ձևավորող փուլերով իրականացվել են հետազոտական-փորձարարական աշխատանքները:

3.Արդյունքների մշակման և ընդհանրացման փուլ: Մշակվել, համակարգվել, վերլուծվել, ընդհանրացվել և գնահատվել են հետազոտության արդյունքները, ստուգվել են առաջադիր դրույթները: Արդյունքներն ընդհանրացվել են գիտական 9 հրապարակումներում, գիտական զեկուցումների տեսքով ներկայացվել գիտաժողովներում, ամբիոնային սեմինարներում, ավարտական տեսքի է բերվել ատենախոսության գիտական ձևակերպումը, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 110 ուսանողների հետ (n-100/հիմնական խումբ) ոչ ֆորմալ ձևաչափով փորձարկվել է մեր կողմից մշակված «Հոգեբանական պատրսատություն և մեդիագրագիտություն» բուհական ինտեգրացված համապիտանի 60 ժամանոց թրենինգ-դասընթացը:

Հետազոտության հուսալիությունն ու հավաստիությունը: Կատարված հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված են հոգեբանական հետազոտությունների ժամանակակից մեթոդաբանական սկզբունքներով, հետազոտության առարկային, նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառված փոխադարձաբար իրար լրացնող նպատակահարմար մեթոդներով և անհրաժեշտ պոպուլյացիաներում

հետազոտությունների թվաքանակով: Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և քննարկվել են Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերում, գիտական կոնֆերանսներում, ֆորումներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են.

1. Ուսանողների՝ ապատեղեկատվության ազդեցության հակվածության անձնային հոգեբանական դետերմինանտներ են ինքնագնահատականի ադեկվատության ցածր աստիճանը, հուզական անկայունությունը, գործնականության, ինքնահսկողության ցածր մակարդակը, բարձր ինքնավստահությունը, դյուրահավատության, կասկածամտության և նյարդայնության բարձր մակարդակը:
2. Ապատեղեկատվության ազդեցությանը տրման հակվածությունը դրսևորվում է համացանցային կախվածությամբ, որտեղ իրավիճակային տագնապայնությունը կարող է հանդես գալ և՝ անցանկալի վարքի պատճառ, և՝ դեստրուկտիվ հետևանք:
3. Համացանցային կախվածության և ապատեղեկատվության հակվածության պատճառահետևանքային շղթայում առանցքային է ուսանող երիտասարդի՝ սեփական անձի մասին ունեցած ոչ ռեսուրսային գնահատականը՝ ցածր ինքնաընդունում, ինքնաարժևորում, ինչպես նաև վատ ինքնակառավարումն ու ինքնավերահսկումը:
4. Ուսանողը ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության ձևերի, դրսևորումների իմացության, սեփական անձի արժևորման, ընդունման, հուզական վիճակների ճանաչման և ինքնակառավարման կարողությունների հիման վրա օբյեկտիվ է գնահատում իրականությունը և կարողանում է կանխարգելել հնարավոր բացասական հետևանքները:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, հավելվածներից: Ընդհանուր ծավալը համակարգչային 137 էջ է (առանց հավելվածների):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, մեթոդաբանական հիմքը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի *առաջին՝* «*Տեղեկատվության սոցիալ-հոգեբանական ազդեցության հիմնախնդիրը*» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում ներկայացվում են տարբեր հեղինակների մոտեցումները, հայացքները ժամանակակից թվային տեխնոլոգիաների, ուսանող երիտասարդների վրա համացանցի սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության ձևերի, համացանցից կախվածության վերաբերյալ, ուսանողի վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ ազդեցության սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, հետևանքները ուսումնառության որակի, նրանց սոցիալականացման գործընթացի, հաղորդակցական կարողությունների մակարդակում, դրանց տիպային դրսևորումները:

Երկրորդ գլուխը վերնագրված է «*Ուսանող երիտասարդների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության փորձարարական հետազոտություն*» և կազմված է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում ներկայացված են հետազոտության փուլերն ու մեթոդիկաները: Փորձարարական հետազոտությունն իրականացվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, որին մասնակցել են 200 ուսանող, որոնք ուսումնառում են Հոգեբանություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, Կերպարվեստ և Երաժշտական կրթություն մասնագիտական կրթական ծրագրերով:

Հետազոտությունն անց է կացվել երեք փուլերով: Առաջին փուլում ուսումնասիրվել են 200 ուսանողներ և արդյունքներով առանձնացվել են այն ուսանողները, որոնց մոտ նկատվել է ապատեղեկատվության ազդեցության հակվածության բարձր ցուցանիշ: Երկրորդ փուլում առանձնացվել են երկու համեմատական խմբեր, որոնց մոտ ուսումնասիրվել են անձնային, հուզական մի շարք առանձնահատկություններ: Առաջին խմբում ներառվել են ապատեղեկատվության ազդեցության հակվածության բարձր ցուցանիշներ ունեցող ուսանողները, իսկ երկրորդ խումբը հանդես է եկել որպես ստուգիչ խումբ: Երրորդ փուլում մշակվել և փորձարկվել է առաջին՝ հիմնական խմբի ուսանողների շրջանում թրենինգ-դասընթաց ուղղված ապատեղեկատվության ազդեցությունների կանխարգելման կարողությունների ձևավորմանը, որից հետո իրականացվել է ռեթեստավորում: Ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության հակվածության բացահայտման նպատակով կիրառվել է մեր կողմից մշակված հարցաթերթը, ինչպես նաև իրականացվել է կոնտենտ վերլուծություն: Այս ենթագլխում ներկայացված են նաև Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման» (16-PF), Ա.Բասսի և Ա.Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման», «Տագնապայնության ինքնագնահատման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու.Լ. Հանինի», Վ.Վ.Ստոլինի և Ս.Պ. Պանտիլեևի «Ինքնավերաբերմունքի ուսումնասիրության», Կիմբեռլի-Յանգի «Համացանցից կախվածություն» մեթոդիկաների կիրառման նպատակները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվել են ուսանող երիտասարդների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության հետազոտության արդյունքները և սոցիալ-հոգեբանական վերլուծությունը (հավաստող գիտափորձ):

Մեր կողմից մշակված հարցաթերթի արդյունքները թույլ են տալիս առանձնացնելու երկու խումբ՝ հիմնական և ստուգիչ: Հիմնական խմբում ներառել ենք թվով 110 ուսանողների, որոնք ժամանակի մեծ մասն անց են կացնում համացանցում, խուսափում են իրական շփումներից, սոցիալական ցանցերում մասնակցում են տարաբնույթ քննարկումների և կատարում են մեկնաբանություններ: Ստուգիչ խմբում ներառել ենք 90 ուսանողների, որոնք առավել քիչ ժամանակ են անցկացնում համացանցում, նախընտրում են դեմ առ դեմ շփումները, սոցիալական ցանցերում հանդիպած տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով ուսումնասիրում են սկզբնաղբյուրները:

Այնուհետև ներկայացվել է **կոնտենտ վերլուծության** մի քանի վառ դեպքեր:

Ռ.Քեթթելի մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները: Առաջին խմբի ինքնագնահատականի ադեկվատությունը /MD/ ցածր է, իսկ ստուգիչ խմբինը՝ բավականին բարձր, ինչն էլ իր հերթին խոսում է այն մասին, որ ապատեղեկատվության հակվածություն ունեցողների մոտ զգալիորեն վնասված է ինքնագնահատականի ադեկվատությունը:

Պարփակվածություն-շփվողականություն /A/ գործակցի համեմատական վերլուծությունից տեսնում ենք, որ բարձր է առաջին խմբի պարփակվածությունը, իսկ երկրորդ խմբի դեպքում հակառակը՝ բարձր է շփվողականությունը, ինչը վկայում է այն մասին, որ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն ունեցող հետազոտվողները խնդիր ունեն այլ մարդկանց հետ հարաբերություններում, չշփվող են:

Ինտելեկտի գործակիցը /B/ շատ քիչ տարբերությամբ բարձր է ստուգիչ խմբի մոտ, որը նշանակում է, որ ինտելեկտը նույնպես կարող է դեր խաղալ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածության հարցում:

Հուզական կայունություն-անկայունություն /C/ գործակցի վերլուծությունից կարող ենք ենթադրել, որ երկրորդ, այսինքն ստուգիչ խմբի մոտ նկատվում է առավել հուզական կայունություն և հակառակը, առաջին խմբի մոտ առակա է թույլ հուզական կայունություն:

Զիջողականություն-գերակշռություն /E/ գործոնի վերլուծությունից տեսնում ենք, որ զիջողականությունը բարձր է առաջին խմբի մոտ, այսինքն այստեղ նույնպես կարող ենք եզրակացնել, որ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն ունեցող հետազոտվողներին բնորոշ է զիջողականությունը:

Զսպվածություն-արտահայտչականություն /F/ գործակցի համեմատական վերլուծության մեջ տեսնում ենք, որ այն առավել բարձր է

ստուգիչ խմբի մոտ, որը նշանակում է, որ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն չունեցողները առավել զսպված են:

Անպատասխանատվություն-նորմատիվություն /G/ գործակցի համեմատական վերլուծությունից հասկանում ենք, որ առաջին խմբի համեմատ, ստուգիչ խմբում ցածր է անպատասխանատվության գործակիցը, իսկ առաջին խմբում այն միջին է, որը խոսում է այն մասին, որ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն չունեցող հետազոտվողները առավել պատասխանատու են:

Վախկոտություն-խիզախություն /H/ գործակիցը բարձր է առաջին խմբի մոտ, ինչը նույնպես հետաքրքրական է այն առումով, որ երբեմն կարող է տպավորություն ստեղծվել, որ սոցիալական ցանցերում բարձր ակտիվությունը կարող է խիզախության նշան լինել, սակայն մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին հակառակ պատկերը:

Զորություն-զգայունություն /I/ սանդղակում համեմատական վերլուծության արդյունքները փաստում են, որ առաջին խմբի հետազոտվողներն առավել զգայուն են ստուգիչ խմբի համեմատ:

Դյուրահավատություն-զգուշավորություն /L/ սանդղակում, ինչպես տեսնում ենք, առաջին խմբի հետազոտողները առավել դյուրահավատ են, քան ստուգիչ խմբինը:

Գործնականություն-զարգացած երևակայություն /M/ սանդղակում նկատում ենք, որ առաջին խմբի հետազոտվողներն ունեն գործնականության ավելի բարձր մակարդակ:

Ուղղամտություն-դիվանագիտություն /N/ սանդղակում տեսնում ենք, որ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն ունեցողներն առավել ուղղամիտ են, քան ստուգիչ խմբի հետազոտվողները:

Ինքնավստահություն-տագնապայնություն /O/ սանդղակում տեսնում ենք, որ առաջին խմբում ունենք բարձր ցուցանիշներ, որը նշանակում է, որ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու կախվածության հակում ունեցող հետազոտվողների մոտ նկատվում է ինչպես շատ բարձր ինքնագնահատական, այնպես էլ համեմատաբար ցածր ինքնագնահատականի ադեկվատություն:

Կոնսերվատիզմ-ռադիկալիզմ /Q1/ սանդղակի համեմատական վերլուծությունից եզրակացնում ենք, որ ապատեղեկատվության հակում ունեցողների խմբում կոնսերվատիզմը ցածր է՝ ի տարբերություն ստուգիչ խմբի, որտեղ նկատում ենք հակառակը՝ բարձր կոնսերվատիզմ:

Զիջողականություն-անզիջողականություն /Q2/ սանդղակի արդյունքներում էական տարբերություններ չենք արձանագրել:

Ցածր ինքնահսկողություն-բարձր ինքնահսկողություն /Q3/ սանդղակի արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ առաջին խմբում առկա է բարձր ինքնահսկողություն:

Թուլացվածություն-լարվածություն /Q4/ սանդղակի արդյունքների վերլուծությունից երևում է, որ սոցիալական ցանցերում առավել ազատ են իրենց զգում առաջին խմբի հետազոտվողները ի տարբերություն ստուգիչ խմբի:

Ա. Բասսի և Ա.Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի» տվյալները տարանջատել ենք՝ ըստ արտահայտվածության երեք աստիճանների (տես՝ աղյուսակ 1):

Արդյունքների վերլուծությունից գալիս ենք այն եզրակացության, որ առաջին խմբի ուսանողների մոտ բարձր ցուցանիշներ են նկատվել անուղղակի ագրեսիայի սանդղակում, որը խոսում է այն մասին, որ անձը անուղղակի ճանապարհով ագրեսիան ուղղում է այլ անձանց հանդեպ բամբասանքների և չար կատակների, զայրույթի ձևով:

Աղյուսակ 1

n -110 Առաջին խումբ (հիմնական խումբ)	*Ֆիզիկական ագրեսիա*	*Խոսքային ագրեսիա*	*Անուղղակի ագրեսիա*	*Նեգատիվիզմ*	*Նյարդայնություն*	*Կասկածամտություն*	*Վիրավորանք*	*Մեղքի զգացում*
բարձր	45%	68%	70%	40%	55%	60%	40%	35%
միջին	30%	22%	15%	30%	25%	30%	30%	30%
ցածր	25%	10%	15%	30%	20%	10%	30%	35%
n=90 Երկրորդ խումբ Ստուգիչ չումբ	*Ֆիզիկական ագրեսիա*	*Խոսքային ագրեսիա*	*Անուղղակի ագրեսիա*	*Նեգատիվիզմ*	*Նյարդայնություն*	*Կասկածամտություն*	*Վիրավորանք*	*Մեղքի զգացում*
բարձր	40%	35%	40%	30%	46%	40%	26%	30%
միջին	45%	55%	35%	40%	35%	40%	25%	35%
ցածր	15%	10%	25%	30%	19%	20%	49%	35%

Ա. Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա»-ի միջինացված տվյալները

Բարձր ցուցանիշներ են գրանցվել նաև վերբալ ագրեսիայի սանդղակում: Վերջինս բացատրվում է հետևյալ կերպ. անձը այլ մարդկանց նկատմամբ ունեցած բացասական զգացմունքները արտահայտում է բառային դիմումների թե՛ ձևի, թե՛ բովանդակության միջոցով: Բարձր ցուցանիշներ են դիտվել ինչպես նաև նյարդայնություն, կասկածամտություն սանդղակներում, որը թույլ է տալիս ասելու, որ անձն ունի համոզմունք, որ այլ մարդիկ կարող են իրեն վնաս պատճառել:

Երկրորդ խմբում ներառված ուսանողների հետ իրականացված հետազոտության արդյունքներից հանգում ենք այն եզրակացության, որ ցայտուն կերպով արտահայտված բարձր կամ ցածր ցուցանիշներ չեն գրանցվել:

Այսպիսով, հիմնական խմբում ներառված ուսանողների մոտ դիտվել է խոսքային, անուղղակի ագրեսիայի, ինչպես նաև կասկածամտության բարձր մարդակ: Մենք գտնում ենք, որ խոսքային ագրեսիվությունը հասարակության սոցիալական տրամադրության վիճակի ցուցիչ է: 18-21 տարեկան ուսանողների

համար սոցիալական ցանցերը համարվում են կյանքի համար առավել նշանակալից ոլորտ, այս տարիքում առավել հակված են ագրեսիայի ընդունմանը, երկար ժամանակ են անցկացնում սոցիալական ցանցերում, ակտիվորեն շփվում են, մասնակցում տարաբնույթ քննարկումների: Սոցիալական ցանցերում կարդացած տեղեկատվության հավաստիությունը մեծամասամբ չեն ստուգում:

«Տագնապայնության ինքնագնահատման Չ.Դ.Սպիլբերգերի և Յու.Լ.Հանինի մեթոդիկայի տվյալների մշակումը ենթադրում է ռեակտիվ և անձնային տագնապայնության ցուցանիշների որոշում հատուկ թեստային բանալու միջոցով:

«Տագնապայնության ինքնագնահատման» Չ.Դ.Սպիլբերգերի և Յու.Լ.Հանինի մեթոդիկան իրականացրել ենք և՛ հիմնական խմբի 110, և՛ ստուգիչ խմբի 90 ուսանողների հետ: Արդյունքների վերլուծությունից գալիս ենք եզրակացության, որ հիմնական խմբի 77% ուսանողներն ունեն իրավիճակային տագնապայնության բարձր մակարդակ, որը բացատրվում է այն հանգամանքով, որ անձին հատուկ է լարվածությունը, անհանգստությունը, նյարդայնությունը: Իրավիճակային բարձր տագնապայնությունը առաջացնում է ուշադրության խախտում: Իսկ ստուգիչ խմբի դեպքում իրավիճակային բարձր ցուցանիշներ դիտվել են միայն 45%-ի մոտ: Ե՛վ ստուգիչ, և՛ հիմնական խմբերում ներառված ուսանողներն ունեն անձնային տագնապայնության միջին մակարդակ: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հիմնական խմբի այն ուսանողները, որոնք ունեն ապատեղեկատվության ազդեցության հակվածություն, խոսքային ագրեսիայի, նյարդայնության բարձր մակարդակ, երկար ժամանակ են անցկացնում համացանցում (6 ժամ և ավելի), նրանք ունեն իրավիճակային տագնապայնության մակարդակ: Ինչպես նաև, դիտվում է կենդանի շփումներից խուսափումը, որը խոսում է սոցիալական տագնապայնության առկայության մասին, որի ժամանակ անձը խուսափում է լինել հասարակության մեջ, տագնապայնություն է զգում սոցիալական իրավիճակներին մասնակից լինելուց, զսպում է իր հույզերը, անհարմար է զգում արտահայտել իր կարծիքը: Իսկ սոցիալական ցանցերում հիմնական խմբում ներառված ուսանողները ներկայանում են և՛ իրենց, և՛ այլ անուն, ազգանուններով, որը թույլ է տալիս իրենց լինել ազատ և՛ իրենց խոսքում, և՛ հույզերի արտահայտման մեջ, ինչպես նաև մեծաքանակ տեղեկատվությունն առաջացնում է քաոս անձի մոտ և նա չի կարողանում տարբերակել՝ հավաստի է այն, թե ոչ: Վերը նշված բոլոր գործոնները հիմք են հանդիսանում իրավիճակային տագնապայնության բարձր մակարդակի համար:

Վ.Վ.Ստոլինի և Ս.Պ. Պանտիլեևի «Ինքնավերաբերմունքի հարցարան» մեթոդիկան իրականացրել ենք երկու խմբերում՝ հիմնական և ստուգիչ: Հիմնական խմբի 110 ուսանողների «Ինքնավստահության» սանդղակի ցածր ցուցանիշները վկայում են, որ անձին չի բավարարում իր սեփական հնարավորությունները, և նա իրեն անկարող ու ոչ ինքնավստահ է զգում:

Հիմնական խմբի 110 ուսանողներից 23%-ի մոտ դիտվել է ինքնավստահության բարձր ցուցանիշ, 12%-ի մոտ՝ միջին, 65%-ի մոտ դիտվել է ցածր ինքնավստահություն: «Ինքնակառավարում» սանդղակը շեշտադրում է անձի ինքնակարգավորման, ինքն իրեն կառավարելու ունակությունը: Բարձր միավորները ցույց են տալիս, որ անձն ունի ինքնակառավարման բարձր ունակություն, կարողանում է հստակ կառավարել սեփական հույզերն ու վարքը, գիտակցում է, որ ինքն է իր ճակատագրի կրողը: Հիմնական խմբի ուսանողներից 22%-ն ունի ինքնակառավարման բարձր ունակություն: Հետազոտվողների 18%-ն ունի ինքնակառավարման միջին մակարդակ, իսկ 60%-ը՝ ցածր, որը փաստում է ոչ արդյունավետ ինքնակարգավորման, սեփական գործունեության, վարքի, արարքների նկատմամբ ոչ բավարար վերահսկողության կարողության մասին: Վերջինս վկայում է նաև սեփական հույզերը կառավարելու ոչ բավարար մակարդակի մասին: «Այլ մարդկանցից ակնկալվող վերաբերմունք» սանդղակը ցույց է տալիս, թե հետազոտվողի սեփական անձի, բնավորության, գործունեության հանդեպ ինչպիսի վերաբերմունք, համակրանք, հարգանք է առաջանում շրջապատող անձանց կողմից: Ստացված սանդղակով բարձր միավորները փաստում են հետազոտվողի անձի հանդեպ շրջապատող մարդկանց կողմից դրական վերաբերմունքի, համակրանքի, հարգանքի ակնկալման մասին: Հիշյալ սանդղակի արդյունքներն են՝ 25% բարձր, 55%՝ միջին, 20%՝ ցածր:

«Ինքնաարժևորում» սանդղակի միջոցով պարզել ենք սեփական անձն արժևորելու զգացողության ցուցանիշը: Բարձր միավորները վկայում են անձի բարձր արժեհամակարգի, սեփական ներաշխարհի մասին: Ցածր միավորները արձանագրում են սեփական հոգևոր «ես»-ի թերարժեքությունը, մեկուսացվածությունն ու անտարբերությունը սեփական անձի հանդեպ: Այսպես, հետևյալ սանդղակով ստացվել են հետևյալ թվային արդյունքները՝ 10% բարձր, 35 %՝ միջին, 55%՝ ցածր:

«Ինքնաընդունում» սանդղակն արտացոլում է սեփական անձի հանդեպ համակրանքի զգացողությունը, սեփական ներքին մղումների ընդունումը, սեփական անձի ընդունումը, ընկալումն այնպիսին, ինչպիսին որ այն կա, սեփական անձի իրատեսական, ադեկվատ ինքնագնահատականը: Այս սանդղակի ցածր միավորները խոսում են սեփական անձի անհաջողության դեպքում ինքնամեղադրանքի, ինքնադժգոհության հակումների մասին: Ստացվել են հետևյալ արդյունքները՝ բարձր՝ 10%, միջին՝ 20%, ցածր՝ 70%:

Այսպիսով, վերլուծելով ստացված արդյունքները՝ գալիս ենք այն եզրակացության, որ հիմնական խմբի ուսանողների մոտ դիտվում է ինքնավստահության, ինքնակառավարման, ինքնաընդունման ցածր ցուցանիշներ, որը խոսում է այն մասին, որ ուսանողը սեփական անձի անհաջողության դեպքում ինքնամեղադրանքի, ինքնադժգոհության հակումներ ունի, ինչպես նաև այս անձանց հատուկ է ոչ արդյունավետ ինքնակարգավորման,

սեփական գործունեության, վարքի, արարքների նկատմամբ ոչ բավարար վերահսկողություն, որոնք հիմք են հանդիսանում անձի՝ ապատեղեկատվության ազդեցության հակվածության մեծացման համար:

Կիմբերլի-Յանգի համացանցային կախվածության թեստի արդյունքների համաձայն առաջին խմբի (հիմնական) հետազոտվողների 68%-ի մոտ առկա է կախվածության բարձր մակարդակ, 26%-ի մոտ նկատվում է միջին մակարդակ, որն ըստ մեթոդիկայի նշանակում է որոշ խնդիրների առկայություն, որոնք պայմանավորված են համակարգչային տարվածությամբ, իսկ 6%-ը սովորական օգտատերեր են:

Երկրորդ խմբի (ստուգիչ) արդյունքների համաձայն հետազոտվողների 8%-ն ունի կախվածության բարձր մակարդակ, 13%-ի մոտ նկատվում է միջին մակարդակ, որն ըստ մեթոդիկայի նշանակում է, որ առկա են որոշ խնդիրներ, որոնք պայմանավորված են համակարգչային տարվածությամբ, իսկ 79%-ը սովորական օգտատերեր են: Ամփոփելով և համեմատելով ստացված արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ ապատեղեկատվության հակվածություն ունեցող հետազոտվողների մոտ առկա է բարձր կախվածության աստիճան ի տարբերություն ստուգիչ խմբի:

Այսպիսով, համադրելով 5 մեթոդիկաները, գալիս ենք այն եզրակացության, որ գոյություն ունի որոշակի փոխկապվածություն ապատեղեկատվության հակվածության և անձնային որոշ առանձնահատկությունների, ագրեսիվության, տագնապայնության, ինքնավերաբերմունքի, համացանցից կախվածության միջև:

Երրորդ գլուխը վերնագրված է «*Ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման ուղիներն ու միջոցները*» և կազմված է երեք ենթագլուխներից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացված են ուսանողների վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցության կանխարգելման երկու հիմնական ռազմավարությունները, դրանց համապատասխան ուղիները:

Երկրորդ ենթագլխում ներկայացրել ենք մեր կողմից մշակված «Հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» բուհական ինտեգրացված թրենինգ-դասընթացի առարկայական նկարագիրը՝ ակադեմիական ժամաքանակը, դրան համապատասխան տեսական և գործնական պարապմունքների բաշխումը, նպատակը, թեմատիկ բովանդակությունը և դրան համապատասխան ժամային բաշխումը, կրթական ելքային արդյունքները, շաբաթական թեմատիկ տրոհումը, դասավանդման մեթոդները: Այն կառուցված է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ընդունված ձևաչափով: Առարկայական նկարագրի թեմատիկ բովանդակությանը համապատասխան իրականացրել ենք լրացուցիչ դասընթաց, որին մասնակցել են առաջին (հիմնական) խմբի 110 ուսանողներ:

Երրորդ ենթագլխում ներկայացված են հիմնական խմբի 110 ուսանողների մասնակցությամբ «Ուսանող երիտասարդների սոցիալ-հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» բուհական ինտեգրացված թրենինգ-դասընթացից հետո իրականացված ռեթեստավորման արդյունքները: Ռեթեստավորման արդյունքները աշխատանքում ներկայացրել ենք արտահայտվածության երեք մասերով՝ ըստ ցուցանիշների, ինչպես արձանագրող փուլում՝ թույլ, միջին և բարձր արտահայտվածության, որը հնարավորություն է տվել մեզ համադրելու նույն աստիճանի վերաբերող տվյալները բոլոր հինգ մեթոդիկաների դեպքում: Ռեթեստավորման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր հինգ մեթոդիկաներով ուսումնասիրված գործոնների քանակական ցուցանիշները, որոնք արտահայտվում են որոշակի օրինաչափություններով, փոփոխության են ենթարկվել, այսինքն՝ ընդգծված արտահայտվածության ցուցանիշները քանակապես բարձրացել են, փոփոխվել և տատանվել են նաև միջին արտահայտվածությամբ գործոնները, իսկ թույլ արտահայտված ցուցանիշները աճել են, որոշ ցուցանիշներ բարձրացել են միջին ցուցանիշների արդյունքներից: Հիշյալ տվյալներն աղյուսակում ներկայացնում ենք որպես ռեթեստավորման արդյունք, քանի որ այդ փոփոխությունները դրսևորվել են որոշակի օրինաչափություններով և համամասնություններով բոլոր մեթոդիկաների պարագայում:

Մեր կողմից մշակված և փորձարկված «Հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» ինտեգրված համապիտանի թրենինգ-դասընթացից հետո ռեթեստավորման արդյունքները ցույց են տալիս, որ ձևավորվել է.

- տեղեկատվության հավաստիությունը օբյեկտիվ գնահատելու կարողություն,
- ինքնակառավարում, ինքնաարժևորում, ինքնավստահութուն, այլ մարդկանցից ակնկալվող վերաբերմունք,
- սեփական հույզերը կառավարելու կարողություն,
- համագործակցության, փոխզիջման և հարմարման վարքի ռազմավարություն,
- տագնապները նվազեցնելու կարողություններ:

Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը, դրանց մեկնաբանումը և ընդհանրացումը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ **եզրակացություններին.**

1. Ուսումնասիրելով ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածությունը ուսանողների շրջանում՝ եզրակացնում ենք, որ հետազոտված ուսանողների մեծամասնության մոտ առկա է այդ խնդիրը:

2. Ուսումնասիրելով ուսանողների անձնային առանձնահատկությունները՝ եզրակացնում ենք, որ ի տարբերություն ապատեղեկատվության ազդեցության տրվելու հակվածություն չունեցող ուսանողների, հակվածություն ունեցողների մոտ առկա են՝

- ցածր ինքնագնահատականի ադեկվատության, պարփակվածության բարձր աստիճան, ինտելեկտի ցածր մակարդակ, հուզական անկայունություն,
- զսպվածության, գործնականության ցածր մակարդակ, անպատասխանատվության միջին մակարդակ, վախկոտության, զգայունության, դյուրահավատության բարձր մակարդակ,
- ուղղամտության բարձր մակարդակ, բարձր ինքնավստահություն, կոնսերվատիզմի ցածր մակարդակ, զիջողականության միջին մակարդակ, ցածր ինքնահսկողության բարձր մակարդակ:

3. Ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն ունեցող հետազոտվողների մոտ դիտվել է խոսքային, անուղղակի ագրեսիայի, կասկածամտության և նյարդայնության բարձր մակարդակ՝ ի տարբերություն ստուգիչ խմբի:
4. Ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն ունեցող հետազոտվողների մոտ դիտվել է իրավիճակային տագնապայնության բարձր մակարդակ՝ ի տարբերություն ստուգիչ խմբի:
5. Ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն ունեցող հետազոտվողների մոտ դիտվել է ինքնավստահության, ինքնակառավարման, ինքնաընդունման և ինքնաարժևորման ցածր մակարդակ:
6. Ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածություն ունեցող հետազոտվողների մոտ դիտվել է համացանցից կախվածության բարձր մակարդակ:
7. Ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման համար կարևոր է հետպատերազմյան Հայաստանի շուրջ ձևավորված ռազմաքաղաքական իրողությունների հաշվառմամբ ուսանողների շրջանում որպես ապատեղեկատվության տարածման կանխարգելման ռազմավարություն տեղեկատվության անվտանգության կամ կիբեռանվտանգության ազգային հայեցակարգի, ռազմավարության մշակումն ու գործնական կիրառությունը:
8. Ռեթեստավորման արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ ապատեղեկատվության դեստրուկտիվ ազդեցության կանխարգելումը հնարավոր է, եթե ուսանողը ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության ձևերի, դրսևորումների իմացության և ինքնակառավարման կարողությունների հիման վրա օբյեկտիվ է գնահատում և կարողանում է կանխարգելել հնարավոր բացասական հետևանքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ 9 հրապարակումներում.

1. Avetisyan A.S., Education philosophy issues in modern world // WISDOM, 3 (16), 2020, P. 209-214. DOI: 10.24234/wisdom.v16i3.343. file:///C:/Users/lenovo/Downloads/343-Article%20Text-1067-1-10-20201225.pdf
2. Ավետիսյան Ա.Ս., Մանկավարժական բուհի գեղարվեստական կրթության ֆակուլտետում ուսանողների սոցիալականացման գործընթացի արդյունավետության ձևերն ու միջոցները // Проблемы современной русистики: Научно-методический журнал: -Ереван, 2021, 8 (12), 173-182. http://msu.am/wp-content/uploads/2022/02/Almanakh_%D0%A5II_8_2021.pdf
3. Avetisyan A.S., Creation As a Meaning Of Personal Psychology // Khachatur Abovian Armenian State Pedagogical University. Main Issues Of Pedagogy And Psychology. Scientific Periodical, vol.21 No 1(2022) 37-44. ISSN1829-1295. DOI: 10.24234/miopap.v21i1.420 https://miopap.aspu.am/index.php/miopap/issue/view/23/23
4. Ավետիսյան Ա.Ս., Ստեղծագործությունը որպես անձի հոգեկերտվածքի արտացոլման միջոց // «Ռուսագիտության արդի հիմնախնդիրները» ամսագրի թ. I (13) 2022 242-249: https://msu.am/wp-content/uploads/docs/Almanakh_XIII%20(9)_2022_site.pdf
5. Գևորգյան Ս.Ռ., Ավետիսյան Ա.Ս., Համացանցի սոցիալ-հոգեբանական դիստրուկտիվ ազդեցության հետևանքները ուսանողի վարքագծում // Գիտական տեղեկագիր N1 (44): -Երևան-2023, էջ 10-20 https://aspu.am/website/images/journal/2-5-PB.pdf
6. Ավետիսյան Ա.Ս., Ուսանողների վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման ժամանակակից սոցիալ-հոգեբանական մոտեցումները // Ռուսագիտության արդի հիմնախնդիրները: Գիտամեթոդական հանդես, 12 (16). - 2023, էջ 228-239:
7. Avetisyan A.S., Socio-Psychological Mechanisms Of The Destructive Impact Of Unreliable Information On A Person And A Group // Կաճառ գիտական պարբերական 2: -Երևան, -2023. էջ 48-57: https://www.flib.sci.am/journal/Katchar/2023_2.html

8. Avetisyan A.S., Problems Of Preventing The Socio-Psychological Destructive Impact Of Misinformation On Studentsrequiring Special Learning Conditions // Khachatur Abovian Armenian State Pedagogical University Armenian journal of special education. DOI:10.24234/se.v7i2.3, p.15-22. https://specedjournal.aspu.am/index.php/se
9. Avetisyan A.S., Ways To Prevent The Negative Socio-Psychological Impact Of Misleading Information // Modern Psychology Scientific Bulletin, 2023, 2(13), p.37-45. DOI: https://doi.org/10.46991/SBMP/2023.6.2.037

АВЕТИСЯН АРМЕН САМВЕЛОВИЧ

ПРОБЛЕМА ПРОФИЛКТИКИ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ДЕСТРУКТИВНОГО ВОЗДЕЙСТВИЯ ДЕЗИНФОРМАЦИИ НА СТУДЕНТОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 – «Социальная психология» Защита диссертации состоится 30 января 2024 года в 14.00 на заседании специализированного совета 064 КВОН при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна (0010, г. Ереван, Тигран Меци 17).

РЕЗЮМЕ

Актуальность темы. Актуальность темы диссертации напрямую обусловлена:

- учитывая сложившиеся вокруг послевоенной Армении военно-политические реалии, как стратегию предотвращения распространения дезинформации среди студенческой молодежи Армении, при отсутствии национальной концепции и стратегии информационной безопасности или кибербезопасности, необходимостью ее развития и применения,
- в современных условиях развития информационно-коммуникационных технологий, с необходимостью предотвращения дезинформации и ее деструктивного социально-психологического воздействия,
- с необходимостью формирования и развития способностей студенческой молодежи в области информационной безопасности в вышеуказанных процессах,
- с необходимостью развития личностных качеств, психической устойчивости, самоуправления, уверенности в себе, способностей управления эмоциями,

- с необходимостью повышения уровня информированности, медиаграмотности.

Цель исследования: выявить механизмы, проявления и последствия социально-психологического деструктивного воздействия дезинформации на студентов и разработать пути профилактики.

Целью и гипотезой исследования определяются следующие задачи:

1. изучить в научной литературе деструктивное воздействие дезинформации на человека, социально-психологические подходы к их профилактике,
2. выявить студентов, склонных к дезинформации,
3. выявить личностные особенности студентов,
4. выявить типы агрессивности студентов, уровень тревожности, самоотношения, интернет-зависимости,
5. разработать и реализовать комплексную учебно-курсовую программу «Психологическая подготовка и медиаграмотность» с предметным описанием и тематическим разделением, в целях предотвращения социально-психологического деструктивного воздействия дезинформации на обучающихся,
6. Провести повторное тестирование после интегрированного тренинг-курса «Психологическая подготовка и медиаграмотность».

Научная гипотеза исследования: предполагается, что профилактика социально-психологического деструктивного воздействия дезинформации на студентов возможно, если студент объективно оценивает ситуацию, исходя из знания механизмов социально-психологического деструктивного воздействия дезинформации, ее проявлений и способностей к самоконтролю. и прогнозирует возможные негативные последствия.

Научная новизна исследования:

1. Мы установили, что существует прямая корреляция между склонностью студентов к влиянию дезинформации и личностными особенностями, когнитивной и эмоциональной сферами, а также интернет-зависимостью.

2. Выявлены психологические особенности студентов, склонных к дезинформации, в том числе неадекватная самооценка, заниженная самооценка, самопринятие, самообладание, доверчивость, эмоциональная неустойчивость, нервозность, ситуативная тревожность, вербальная и косвенная агрессия, мнительность.

3. Разработана и экспериментально обоснована эффективность университетского комплексного тренинг-курса «Социально-психологическая подгатовка и медиаграмотность студентов» в предотвращении деструктивного социально-психологического воздействия дезинформации.

Теоретическая и практическая значимость исследования. Результаты проведенных нами теоретических и экспериментальных исследований могут быть включены в теоретические положения социальной психологии, пополнить содержательную базу, связанную с проблемой. Практическая значимость нашего исследования обусловлена тем, что полученные данные исследования и разработанный интегрированный курс вузовской подготовки могут быть реализованы в профессиональных образовательных программах и способствовать профилактике деструктивного социально-психологического воздействия дезинформации на студенческую молодёжь. Также подчеркнем, что результаты наших исследований и учебная программа могут эффективно использоваться в качестве методического материала соответствующими подразделениями силовых государственных структур, практическими психологами.

Надежность и достоверность результатов исследования. Достоверность и обоснованность результатов проводимого исследования обеспечиваются современными методологическими принципами психологического исследования, взаимодополняющими подходящими методами, применяемыми в соответствии с предметом, целью и задачами исследования и с количеством исследований в необходимых популяциях.

Основные положения кандидатской диссертации были представлены и обсуждены на заседаниях кафедры прикладной психологии Армянского государственного педагогического университета имени Х.Абовяна, научных конференциях и форумах.

Структура диссертации. Работа состоит из введения, 3 глав, заключения, списка использованной литературы, приложений.

ARMEN S. AVETISYAN

THE PROBLEM OF PREVENTION OF SOCIO-PSYCHOLOGICAL DESTRUCTIVE IMPACT OF DISINFORMATION ON STUDENTS IN REPUBLIC OF ARMENIA

Thesis submitted for the Degree of Candidate of Psychological Sciences in the field of expertise: 19.00.03 "Social Psychology". The official (public) defence of the thesis will take place at HESC 064 Degree-awarding Scientific Council's session on january 30, 2023, at 14:00 at Khachatur Abovian Armenian State Pedagogical University (ASPU) (Address: 0010 Yerevan, Tigran Mets 17).

SUMMARY

Actual relevance of the research. The relevance of the dissertation topic is directly determined by:

• taking into account the military-political realities that have developed around post-war Armenia, as a strategy for preventing the spread of disinformation among

Armenian students, in the absence of a national concept and strategy for information security or cybersecurity, the need for its development and application,

- in modern conditions of development of information and communication technologies, with the need to prevent misinformation and its destructive social and psychological impact,
- with the need to form and develop the abilities of students in the field of information security in the above processes,
- with the need to develop personal qualities, mental stability, self-government, self-confidence, ability to manage emotions,
- with the need to increase the level of awareness and media literacy.

The aim of the research: purpose of the study: to identify the mechanisms, manifestations and consequences of the socio-psychological destructive impact of misinformation on students and to develop ways of prevention.

The following **objectives** were drawn from the overall aim and hypothesis:

1. study in the scientific literature the destructive effects of misinformation on humans, socio-psychological approaches to their prevention,
2. identify students prone to misinformation,
3. identify the personal characteristics of students,
4. identify types of aggressiveness of students, level of anxiety, self-attitude, Internet addiction,
5. develop and implement a comprehensive educational course program "Psychological training and media literacy" with a subject description and thematic division, in order to prevent the socio-psychological destructive impact of misinformation on students,
6. Conduct re-testing after the integrated training course "Psychological preparation and media literacy."

Scientific hypothesis of the study: it is assumed that prevention of the socio-psychological destructive impact of misinformation on students is possible if the student objectively assesses the situation based on knowledge of the mechanisms of the socio-psychological destructive impact of misinformation, its manifestations and abilities for self-control. and predicts possible negative consequences.

Scientific novelty of the research:

1. We established that there is a direct correlation between students' propensity to be influenced by misinformation and personal characteristics, cognitive and emotional spheres, as well as Internet addiction.
2. Psychological features of students prone to misinformation have been identified, including inadequate self-esteem, low self-esteem, self-acceptance, self-control, gullibility, emotional instability, nervousness, situational anxiety, verbal and indirect aggression, suspicion.

2. The effectiveness of the university comprehensive training course "Socio-psychological preparation and media literacy of students" in preventing the destructive socio-psychological impact of misinformation has been developed and experimentally substantiated.

Theoretical and practical significance of the research. The results of our theoretical and experimental research can be included in the theoretical provisions of social psychology and supplement the content base associated with the problem. The practical significance of our study is due to the fact that the research data obtained and the developed integrated university training course can be implemented in professional educational programs and help prevent the destructive socio-psychological impact of misinformation on students. We also emphasize that the results of our research and the curriculum can be effectively used as methodological material by the relevant departments of law enforcement agencies and practical psychologists.

Reliability and validity of the research results. The reliability and validity of the results of the research are ensured by modern methodological principles of psychological research, complementary appropriate methods used in accordance with the subject, purpose and objectives of the study and with the number of studies in necessary populations.

The main provisions of the candidate's dissertation were presented and discussed at meetings of the Department of Applied Psychology of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan, scientific conferences and forums.

Structure of the dissertation. The work consists of an introduction, 3 chapters, a conclusion, a list of references, and applications.